ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» մարտի 2022թ. № 186

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-006-0255-0003 ԵՎ 06-006-0255-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 1,00240 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «Գեոգլոբալ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0255-0003 և 06-006-0255-0004 կադաստրային ծածկագրերով հողամասերից առանձնացված 1,00240 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի հողամասի հատակագիծը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 4
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» մարտի 2022թ. № 187

ՀՈՒՆԱՆ ԵՐՋԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ և 50-րդ կետերով, հիմք ընդունելով «Արսեն Իսահակյան» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31012022-06-0037 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածքներ՝ 06095DURHYAO, 06095YILFXJC) և Հունան Երջանիկի Սարգսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հունան Երջանիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ առանձին գույքային միավորների բաժանված՝ 06-095-0026-0024 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության 0,10000 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «Սպիտակ, գյուղ Ջրաշեն, 4-րդ փողոց, 36 հողամաս» հասցեն, իսկ բնակավայրերի նպատակային նշանակության 0,095186 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «Սպիտակ, գյուղ Ջրաշեն, 4-րդ փողոց, 36/1 հողամաս» հասցեն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված առանձին գույքային միավորների բաժանված անշարժ գույքերի հատակագծերը:

3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 4
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022թ. № 188.

ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՔԱՂԱՔ ՍՊԻՏԱԿ, ԻՏԱԼԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 153, ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ԳԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 17-րդ և 18-րդ կետերով, հաշվի առնելով, որ Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղին սեփականության իրավունքով պատկանող, «ք.Սպիտակ, Իտալական թաղամաս, թիվ 153, Մայր Թերեզայի գթության կենտրոն» հասցեում գտնվող, 06-006-0536-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,5407 հեկտար մակերեսով հողամասի վրա 2015 թվականին ինքնակամ կառուցված 8,8 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի, 7,5 քառակուսի մետր մակերեսով աստիճանների և 175,5 քառակուսի մետր մակերեսով ծածկի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22092015-06-0025 վկայականը, «Սարգիս Թամազյան Ռոբերտի» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ

գույքի չափագրման հաշվետվությունը, «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղի կողմից ներկայացված դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղին սեփականության իրավունքով պատկանող, «ք.Սպիտակ, Իտալական թաղամաս, թիվ 153, Մայր Թերեզայի գթության կենտրոն» հասցեում գտնվող, 06-006-0536-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,5407 հեկտար մակերեսով հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղին սեփականության իրավունքով պատկանող, «ք.Սպիտակ, Իտալական թաղամաս, թիվ 153, Մայր Թերեզայի գթության կենտրոն» հասցեում գտնվող, 06-006-0536-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,5407 հեկտար մակերեսով հողամասի վրա 2015 թվականին ինքնակամ կառուցված 8,8 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 7,5 քառակուսի մետր մակերեսով աստիճանները և 175,5 քառակուսի մետր մակերեսով ծածկը ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղի սեփականության իրավունքը:

4. Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղին.

1) համայնքի բյուջե վճարել 463 773 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900245161352) օրինականացման վճար,

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել Էդգար Թորոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 07
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022թ. N° 189

ՍԻՐՎԱՐԴ ԲԱԲԿԵՆԻ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 23.1 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 15-րդ ենթակետի, հիմք ընդունելով Սիրվարդ Բաբկենի Մարությանի 2022 թվականի մարտի 4-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Սիրվարդ Բաբկենի Մարությանին տալ Սպիտակ համայնքի անվանումը ֆիրմային անվանումում օգտագործելու թույլտվություն ՝ 2022 թվականի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ..... Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 7
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022թ. № 190

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՐԱՆՏ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԱՂԱԲԵԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Հրանտ Վլադիմիրի Աղաբեկյանին, Աննա Արտուշի Լալայանին, Ելենա Հրանտի Աղաբեկյանին, Արթուր Հրանտի Աղաբեկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Նոր Խաչակապ բնակավայրի «1-ին փողոց, 47 բնակելի տուն» հասցեում գտնվող, 06-083-0006-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,1200 հեկտար մակերեսով հողամասի վրա 2012 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան և ծածկի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն

առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10122021-06-0001 վկայականը, «Սարգիս Թամազյան Ռոբերտի» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Հրանտ Վլադիմիրի Աղաբեկյանի և Աննա Արտուշի Լալայանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի Նոր Խաչակապ բնակավայրի «1-ին փողոց, 47 բնակելի տուն» հասցեում գտնվող, Հրանտ Վլադիմիրի Աղաբեկյանին, Աննա Արտուշի Լալայանին, Ելենա Հրանտի Աղաբեկյանին և Արթուր Հրանտի Աղաբեկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, 06-083-0006-0015 կադաստրային ծածկագրով 0,1200 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Հրանտ Վլադիմիրի Աղաբեկյանին, Աննա Արտուշի Լալայանին, Ելենա Հրանտի Աղաբեկյանին և Արթուր Հրանտի Աղաբեկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Նոր Խաչակապ բնակավայրի «1-ին փողոց, 47 բնակելի տուն» հասցեում գտնվող, 06-083-0006-0015 կադաստրային ծածկագրով 0,1200 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 49,90 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը և 4,50 քառակուսի մետր մակերեսով ծածկը ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Հրանտ Վլադիմիրի Աղաբեկյանի, Աննա Արտուշի Լալայանի, Ելենա Հրանտի Աղաբեկյանի և Արթուր Հրանտի Աղաբեկյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Հրանտ Վլադիմիրի Աղաբեկյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 48 100 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել Էդգար Թորոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 7
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022թ. № 191

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՐԻԿ ԷՀՏԻԲԱՐՅԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նորիկ Էհտիբարյանի 2022 թվականի մարտի 7-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Նորիկ Էհտիբարյանին (ՀՎՀՀ 66922144) տալ «ք. Սպիտակ, Վանաձորի խճղ. 10» հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում (97 քառակուսի մետր մակերեսով հիմնական շինություն) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2022 թվականի 1-ին եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 7
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 07 » մարտի 2022թ. № 192

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՐԻԿ ԷՀՏԻԲԱՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նորիկ Էհտիբարյանի 2022 թվականի մարտի 7-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Նորիկ Էհտիբարյանին (ՀՎՀՀ 66922144) տալ «ք. Սպիտակ, Վանաձորի խճղ. 10» հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում (97 քառակուսի մետր մակերեսով հիմնական շինություն) ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման թույլտվություն 2022 թվականի 1-ին եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 7
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 07 » մարտի 2022թ. № 193

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ՝ ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ շնորհավորական բացիկներ, ծաղկային կոմպոզիցիաներ, ծաղիկներ, պատվոգրեր և նկարի շրջանակ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 530 200 ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 7
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» մարտի 2022թ. № 194

ԱՍՏՂԻԿ ՌԱՖԻԿԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Ք.Քըրքորյան փողոցի վրա գտնվող 06-006-0302-0004 կադաստրային ծածկագրով 0,077 հա մակերեսով հողամասը, դրա վրա գտնվող 84,6 քմ մակերեսով բնակելի տունը և 34,0 քմ մակերեսով գոմն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի փետրվարի 28-ի վկայագրով (գրանցված է սեղանամատյանում N 450) փոխանցվել են Աստղիկ Ռաֆիկի Բաբայանին, սակայն նախկինում չեն հասցեավորվել, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006UBAOSSL) և Աստղիկ Ռաֆիկի Բաբայանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աստղիկ Ռաֆիկի Բաբայանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Ք.Քըրքորյան փողոցի վրա գտնվող 06-006-0302-0004 կադաստրային ծածկագրով 0,077 հա մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 84,6 քմ մակերեսով բնակելի տանը և 34,0 քմ մակերեսով գոմին տրամադրել «Սպիտակ համայնք, ք.Սպիտակ, Ք.Քըրքորյան փողոց, թիվ 268» հասցեն (փոստային դասիչը՝ 1806):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 9
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» մարտի 2022թ. № 195

«ՀՈՒՍԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ՀՈՒՍԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2022 թվականի մարտի 7-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՀՈՒՍԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66928545) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Շենավան 1փ. 46տ» հասցեում գտնվող խանութում (ոչ հիմնական շինություն՝ 18 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2022 թվականի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 9
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» մարտի 2022թ. № 196

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈԳԱՐԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-030-0022-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1437666 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06030Q4VEGC2) և Լևոն Սարգսի Գասպարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Լևոն Գասպարյանին, Ռոզա Գասպարյանին, Արտակ Գասպարյանին, Լենա Գասպարյանին և Արամ Գասպարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող, 06-030-0022-0001 կադաստրային ծածկագրով, 0,12 հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել «Սպիտակ համայնք, գ.Գոգարան, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 2» հասցեն (փոստային դասիչը՝ 1809):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 9
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» մարտի 2022թ. № 197

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0052-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող գտնվող 06-095-0052-0026 կադաստրային ծածկագրով, 0,139 հա մակերեսով հողամասի 1/5-րդ մասն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի փետրվարի 18-ի վկայագրով (գրանցված է սեղանամատյանում N 381) փոխանցվել է Անդրանիկ Գեիմի Սաֆարյանին, սակայն հողամասը նախկինում չի հասցեավորվել, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06095XAMD2QO) և Անդրանիկ Գեիմի Սաֆարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Անդրանիկ Գեիմի Սաֆարյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-006-0052-0026 կադաստրային ծածկագրով 0,139 հա մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ.Ջրաշեն, 8-րդ փողոց, 11-րդ նրբանցք, թիվ 35» հասցեն (փոստային դասիչը՝ 1821):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 9
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» մարտի 2022թ. № 198

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵԴՐԱԿԻ ՄԵԼՈՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում գտնվող 06-075-0045-0002 կադաստրային ծածկագրով 0,392 հա մակերեսով հողամասը և դրա վրա գտնվող 76,7 քմ մակերեսով բնակելի տունն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի փետրվարի 24-ի վկայագրով (գրանցված է սեղանամատյանում N 417) փոխանցվել են Անդրանիկ Սեդրակի Մելոյանին, սակայն նախկինում չեն հասցեավորվել, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06075JAHOR4F) և Անդրանիկ Սեդրակի Մելոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Անդրանիկ Սեդրակի Մելոյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում գտնվող 06-075-0045-0002 կադաստրային ծածկագրով 0,392 հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 76,7 քմ մակերեսով բնակելի տանը տրամադրել «Սպիտակ համայնք, գ.Մեծ Պարնի, 3-րդ փողոց, թիվ 46» հասցեն (փոստային դասիչը՝ 1818):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 9
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 10 » մարտի 2022թ. № 199

ԾԱՂԿԵՊՍԱԿ ԵՎ ԾԱՂԻԿՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, 2011թ. մարտի 11-ին Ճապոնիայի ցունամիի, ինչպես նաև 1988թ. Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու համար ծաղկեպսակ և ծաղիկներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 38 000 ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2022թ. № 200

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՓՆՅԱ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՅՈՒԶԱՆՆԱ ՔՅԱՄԱԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Սյուզաննա Քյամալի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող «ք. Սպիտակ, Առափնյա թաղամաս 2-րդ նրբանցք, 3 բնակելի տուն» հասցեում գտնվող, 06-006-0024-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,09480 հեկտար մակերեսով հողամասի վրա 2020 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան, պատշգամբի, ծածկի, պարսպի և թվով 8 (ութ) ներքին ձևափոխությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15032021-06-0032 վկայականը, «Արսեն Իսահակյան Ռուդիկ» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի

նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Սյուզաննա Քյամալի Գրիգորյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սյուզաննա Քյամալի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող «ք. Սպիտակ, Առափնյա թաղամաս 2-րդ նրբանցք, 3 բնակելի տուն» հասցեում գտնվող, 06-006-0024-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,09480 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված 53,97 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 6,56 քառակուսի մետր մակերեսով պատշգամբը, 77,86 քառակուսի մետր մակերեսով ծածկը, 2,57 քառակուսի մետր պարիսպը և թվով ութ ձևափոխությունները ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սյուզաննա Քյամալի Գրիգորյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Սյուզաննա Քյամալի Գրիգորյանին ՝

1) համայնքի բյուջե վճարել 297 990 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել Էդգար Թորոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. մարտի 10
ք.Սպիտակ